

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի առաջին Հանրապետության ոչ լեգիտիմ խորհրդի գործունեության վերջին շրջանում տեղ գտած ճգնաժամային իրավիճակի հաղթահարման և բանական լեգիտիմության, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով խորհրդարան կազմելու գործում կարևորագույն քայլերից առաջինը ժողովրդավարությանը բնորոշ իրավաքաղաքական այնպիսի միջոցառման կազմակերպված անցկացումն էր, ինչպիսին խորհրդարանական ընտրություններն էին:

Քաղաքագիտության հանրահայտ տեսակետի համաձայն՝ ընտրական համակարգն օրենքով սահմանված կանոնների և սկզբունքների այնպիսի ամբողջություն է, որոնց գործադրման միջոցով «... ապահովվում է իշխանության որոշակի տիպի կազմավորումը, հասարակության մասնակցությունը պետական օրենսդիր, գործադիր և դատական ներկայացուցչական օրգանների ձևավորմանը, հանդիսանում է ազգաբնակչության այն հատվածի կամքի արտահայտությունը, որն օրենքով սահմանված կարգով բավարար է համարվում ընտրությունների արդյունքը լեգիտիմ ճանաչելու գործում»¹: Այդ առումով ժողովրդավարական երկրներում ընտրական համակարգը համարվում է քաղաքական համակարգի կարևորագույն տարրերից մեկը և իբրև այդպիսին «... ինչպես ցանկացած այլ համակարգ, բաժանվում է կառուցվածքային տարրերի, որոնցից իբրև առավել ընդհանուր առանձնացվում են 1) ընտրական իրավունքը՝ տեսական-իրավաբանական բաղադրամասը, 2) ընտրական պրոցեդուրան (կամ ընտրական գործընթացը)՝ պրակտիկ-կազմակերպչական բաղադրամասը (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»²:

Ընտրական համակարգի նկատմամբ համահունչ է եղել նաև Հայաստանի խորհրդի դիրքորոշումը: Դրա հավաստումը Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական կուսակցությունների և կառավարության փոխհամաձայնությամբ կազմված «Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին» օրինագիծն էր: Այն իրավական վերջնական տեսք ստացավ 1919 թ. մարտի 31-ի օրենքով, որով էլ Հայաստանում շրջանառության մեջ դրվեց երկար սպասված ընտրությունների ժողովրդավարական համակարգը³:

Օրենքը հռչակում էր, որ Հանրապետության «պառլամենտի ընտրությունները կատարելու ժամանակ պետության բովանդակ տարածությունը

¹ Политология: Энциклопедический словарь. М., 1993, с. 116.

² Политология: (под ред. проф. М.А. Васильяка). М., 1999, с. 273.

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Ե., 2000, էջ 95, 96, Տե՛ս նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 292:

հանդիսանում է մի ընտրական շրջան», հաստատում էր խորհրդարանի անդամների թիվը (80 պատգամավոր) և սահմանում խորհրդարանական ընտրությունների ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկություն: Ընդհանուր կանոնների շարքում ժողովրդավարության արդի պահանջներին լիովին համահունչ էր օրենքի առաջին հոդվածը, ուր ամրագրվում էր այն փաստը, որ «ՀՀ պառլամենտի անդամներին ընտրում է ազգաբնակչությունը, առանց սեռի խտրության» ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուցչության սկզբունքը»⁴:

Ժողովրդավարական երկրների խորհրդարանական ընտրություններին առաջադրվող պահանջներին լիովին համահունչ էին նաև ընտրական իրավունքին վերաբերող օրենսդրական հոդվածները: Դրանց համաձայն ընտրելու իրավունք ունեին «... ՀՀ երկու սեռերի քաղաքացիները, որոնց քսան (20) տարին լրանում է ընտրությամբ օրը», ընդ որում, այդ պայմանները չէին տարածվում միայն «խսկական զինվորական ծառայության մեջ եղածների» վրա: Դրական պետք է համարել և այն, որ օրենքը նախատեսում էր նաև ընտրական իրավունքից զրկելու պայմանները. «Ընտրություններին չեն մասնակցում նրանք, որ հաստատված օրինական կարգով խենթ կամ խելագար են ճանաչված, նաև խուլուհամրերը, որ ենթակա են խնամակալության»⁵: Օրենքի ժողովրդավարական բնույթի ամհերքելի վկայություններից էր և այն, որ նախատեսվում էր ընտրությունների անցկացում առանց ազգային, կրոնական և սեռի խտրականության⁶:

Ընդհանրապես, ժողովրդավարական երկրներում ընտրական համակարգերը ներառում են մի շարք բաղադրատարրեր, որոնք արդի քաղաքագիտությունը համախմբում է երեք հիմնական խմբերում՝ համամասնական, որը համաժողովրդական ընտրությունների արդյունքում ենթադրում է մանդատների բաշխում՝ ըստ կուսակցական ցուցակների, մեծամասնական, որը ենթադրում է մանդատների բաշխում՝ օրենքով սահմանված ձայների մեծամասնություն ստանալու դեպքում, և ներկայացուցչական, որը ընտրովի օրգաններում ապահովում է քաղաքական փոքրամասնությունների ներկայությունը⁷: Այդ մեկնակետի դիրքերից կարող է թվալ, թե Հայաստանի խորհրդարանական ընտրակարգը միաբևեռ էր, քանի որ օրենքը նախատեսում էր միայն համամասնական ընտրակարգի ներդրում: Բայց պետք է նկատել, որ համամասնական ընտրակարգը թեև կապված է որոշ բարդությունների հետ, այնուհանդերձ, օբյեկտիվության շրջանակներում կարող է լիովին ապահովել տարբեր

⁴ Սանրամասները տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 96:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս Ա. Կրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 292:

⁷ Տե՛ս Политология: Энциклопедический словарь, с. 117.

կուսակցությունների, այդ թվում՝ արտախորհրդարանական, և քաղաքական փոքրամասնությունների ներկայացուցչությունը: Եթե Հայաստանում ներդրված համամասնական ընտրակարգը դիտարկվի անգամ իբրև ընտրական իրավունքների որոշակի սահմանափակում, ապա այդ պարագայում անգամ չի կարելի չարձանագրել, որ Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական համակարգի ձևավորման նախորդ փուլի հետ համեմատած՝ ընտրական օրենքը ժողովրդավարական հսկայական առաջընթաց քայլ էր: Կարծում ենք, այս պարագայում էականն այն էր, որ օրենքը նախատեսում էր համապետական ընտրությունների անցկացում, իսկ երկրում գործող բոլոր կուսակցությունների, հասարակական և ազգային կազմակերպությունների համար հավասար իրավունքներ էին հաստատվել պատգամավորության թեկնածուների ցանկ առաջադրելու գործում⁸:

Հայաստանում խորհրդարանական ընտրությունների օրենսդրական ապահովման պատկերը ներկայացնելու գործում հարկ է թվարկել նաև կազմակերպչական բնույթի այնպիսի միջոցառումների անցկացումը, ինչպիսիք էին օրենսդիր իշխանության կողմից կենտրոնական ընտրական հանձնաժողովի, գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և թաղամասային հանձնաժողովների և դրանց նախագահների նշանակումը, ընտրական իրահանգիշների և մանրամասն իրահանգներ պարունակող «ժողովրդական թերթիկների» հաստատումը: Երկրի ընտրական բոլոր տարածքներում (բացառությամբ Կարսի և Շարուր-Նախիջևանի) իրականացվեց ընտրողների ցուցակագրում: Օրենքով սահմանված կարգով կազմվեցին խորհրդարանական ընտրությունների ժամանակացույց, ընտրացուցակներ և թեկնածուների յոթ ցուցակ:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ընտրություններն անցկացվեցին 1919 թ. հունիսի 21-23-ին, որի պաշտոնական արդյունքները 10 օր անց իրապարակվեց Հանրապետական մամուլում⁹: Դրանով Հայաստանի

⁸ Հայաստանի խորհրդարանի ընտրություններին մասնակցելու համար հանրապետական Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մայիս ամսին հաստատեց քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, ՀԺԿ, սոցիալ-հեղափոխական), ազգային (քրդերի, ասորիների և թրքական) և հասարակական (Արագածոտնի անկուսակազմական գյուղացիական միություն) կազմակերպությունների թեկնածուների 7 ցուցակ: Սակայն մայիսի 28-ի պառակտումից հետո ՀԺԿ-ն և սոցիալ-դեմոկրատ մենչևիկները թյուտեցին ընտրությունները, որոնց միացան նաև ռամկավարները: Այդ մասին մանրամասները տես Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետ՝ ՀՀ ԴԿՊԱ), ֆ. 198, ց. 1, գ. 7, թթ. 1-8: Տես նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 292-293 և այլն:

⁹ Ժամանակի մամուլի իրապարակումներից դատելով՝ ընտրությունների ժամանակ թույլ էին տրվել բազմաթիվ խախտումներ: Եվ չնայած դրան, նորընտիր խորհրդարանի մանդատային հանձնաժողովը համարեց, որ «դրանք եապես չեն ազդել արդյունքների վրա» և հաստատեց պատգամավորական բոլոր 80 մանդատները: Ընտրության արդյունքներն այսպիսին էին՝ ՀՅԴ՝ 72 պատգամավոր, «Եւեւ» 4 պատգամավոր: Արագածոտնի անկուսակազմական գյուղացիական միությունից՝ 1 պատգամավոր, թրքական ցուցակից՝ 2 պատգամավոր, եզդիների ցուցակից՝ 1 պատգամավոր (Ս. Վրացյանը

առաջին Հանրապետության քաղաքական համակարգն անցում կատարեց նոր՝ օրենսդրական ժողովրդավարության զարգացման փուլի:

Ընտրությունները միաժամանակ ցույց տվեցին, որ երկրում դեռևս բավականին ցածր էր ինչպես ընտրազանգվածի քաղաքական հասունության աստիճանը, անպես էլ՝ քաղաքական կուսակցությունների գործունեության արդյունավետությունը: Այդ իրողությունն է վկայում նաև Հովի. Քաջազունին, երբ գրում է. «Պարլամենտական ընտրությունները կատարել էին ամենալայն դեմոկրատական սիստեմով (ընդհանուր, հաւասար, ուղղակի ու գաղտնի ծայնատութիւն, համեմատական ներկայացուցչութիւն), բայց տարօրինակ էր ու վիատեցուիջ այդ իբր թէ ժողովրդավարական հաստատութեան կազմը 80 անդամից 72 ... դաշնակցականներ էին ... միւս քաղաքական կուսակցութիւններից ներայ էր միայն սոցիալիստ յեղափոխականը, որը գրաւել էր ընդամենը չորս տեղ»¹⁰: Հիմնահարցի դրամատիզմը նրանում էր, որ Հանրապետության ներկայացուցչական ինստիտուցիոնալ կառույցը՝ խորհրդարանական համակարգը, ըստ էության, այլևս ներկայացուցչական կոչվել չէր կարող: Այդ մտահոգությամբ էլ Հովի. Քաջազունին գրում է. «Ես մեր կուսակցության համար մեծ դժբախտություն եմ համարում այն, որ նա հայ ժողովրդի կյանքում այդպիսի բացառիկ մեծ դեր է խաղում, որ ահեղ ժամին նա ոչ ոքի հետ չի կարող կիսել պատասխանատվությունը: Բայց իրավիճակը ձևավորվել է և պարտավորեցնում է: Եթե խորհրդարանում 80 տեղից մենք վերցրել ենք 73-ը (պետք է լինի 72-ը՝ Ա. Ք.), այլ կերպ ասած՝ բացի մեզանից գործից հեռացրել ենք բոլորին, ապա դրանով ողջ պատասխանատվությունը վերցրել ենք մեզ վրա»¹¹: Նորընտիր խորհրդարանն իր աշխատանքները սկսեց 1919 թ. օգոստոսի 1-ին: Հաստատվեց աշխատակարգ և վավերացվեցին պատգամավորական մանդատները: Ընտրվեց խորհրդարանի նախագահություն և խորհրդարանական 12 համեմատողովներ: Աշխատակարգին համապատասխան քննարկվեց կառավարության քաղաքական ծրագրի հայտարարագիրը, հաստատվեց նոր վարչապետ և կառավարության նոր կազմ¹²:

հայտնում է 3 թուրքերի ընտրության մասին): 80 պատգամավորներից 13-ը արևմտահայ էին, և 3-ը՝ կին: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 3, թթ. 22-23, գ. 32, թ. 5, ֆ. 276, ց. 1, գ. 119, թթ. 98-99: Տե՛ս նաև Ա. Վրաջյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 292-294:

¹⁰ Հովի. Քաջազունի, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, 29-30:

¹¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 109-110:

¹² Օգոստոսի 5-ի նիստում խորհրդարանի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Լևոն Շանթը և Սարգիս Արարատյանը, ավագ քարտուղար՝ Հակոբ Տեր-Հակոբյանը, կրտսեր քարտուղար՝ Արամ Սաֆրաստյանը: Նախարար հաստատվելու կապակցությամբ Ա. Արարատյանին փոխարինեց Հովսեփ Արղությանը: Օգոստոսի 10-ի նիստում խորհրդարանը հաստատեց կառավարության կազմը: Չնավորվեցին նաև խորհրդարանական 12 համեմատողովներ՝ օրենսդրական, ֆինանսա-քաղաքական, ինքնավարությունների, պարենավորման, հողային, աշխատանքի և խնամատարության, ներգաղթի և վերաշինության, դպրոցական-կրթական, զինվորական, խմբագրական, բժշկա-սանիտարական և հանրօգուտ ձեռնարկների ու շինությունների: Այդ ամենի մասին

Քաղաքագիտության արդի տեսությունը միանգամայն օրինաչափ է համարում, որ խորհրդարանական հանրապետության շրջանակներում կառավարությունը, կազմավորվում է խորհրդարանական մեծամասնություն կազմող կուսակցության հենքի վրա: Նույն տրամաբանությամբ էլ կառավարությունը գործադիր իշխանությունն իրականացնում է այնքան ժամանակ, որքան վայելում է խորհրդարանական մեծամասնության աջակցությունը:

Այդ օրինաչափությունների դիրքերից միանգամայն բնական էր, որ Հայաստանի նորընտիր կառավարությունը հիմնականում պետք է համալրվեր խորհրդարանական բացարձակ մեծամասնություն ներկայացնող ՀՅԴ հենքի վրա: Ընդ որում, այդ գործընթացում պետք էր առաջնորդվել պետական գերակայությունների առաջնայնությամբ տոգորված այն սկզբունքով, որ «Հայ ժողովրդի կյանքում բացառիկ ճգնաժամային այս պահին մեր» (ՀՅԴ Ա. Բ.) գլխավոր և միակ խնդիրը կենսունակ պետություն ձևավորելն է, կամ, ծայրահեղ դեպքում, նրա համար ամուր հիմքերի կառուցելը: Այդ խնդիրն այնքան մեծ է, որ նրա դիմաց պետք է մոռացվալ մնացյալ ամեն ինչ»¹³:

Պահն իրոք ճակատագրական էր, և երկրի առջև ծառացած ռազմավարական և մարտավարական անհետաձգելի խնդիրների լուծումը հրամայաբար պահանջում էր հասարակական և քաղաքական բոլոր ուժերի միասնացում: Եվ, քանի որ երկրի օրենսդիր իշխանությունը չէր կարող այլևս ապահովել անհրաժեշտ ներկայացուցչություն՝ պետական շահերի առաջնայնության թելադրանքով գերադասելի կլինեիր պահանջվող ներկայացուցչություն ապահովել գործադիր իշխանությունում, մտապահելով, որ «... եթե այժմ մենք չկարողանանք պետություն հիմնել, այդ հնարավորությունը կարող ենք առհավետ կորցնել»¹⁴: Հովհ. Քաջազունին նշված գերխնդիրն իրականացնելու գործում անհրաժեշտ լայնախոհությունը խիստ կարևորում էր նաև այն պարզ պատճառով, որ խորհրդարանում բացարձակ մեծամասնություն կազմող ՀՅԴ-ի «...կողքին չկա ընդդիմություն, որը մեր գործունեության մեջ անհրաժեշտ ճշգրտումներ մտցնի: Հետևաբար մենք ինքներս պետք է ճշգրտենք մեզ, դրսևորենք ծայրահեղ գզուշություն, հիշելով, որ եթե սխալ գործենք, ապա չկա մեկը, որն ուղղի մեզ...»¹⁵: Այնինչ, նորընտիր խորհրդարանն օրախնդիր այդ հարցերի նկատմամբ միանգամայն կրավորական քաղաքականություն որդեգրեց: Խոսքը վերաբերում է այն բանին, որ Հանրապետության նոր կառավարությունը կազմվեց բացառապես ՀՅԴ անդամներով, որով ուսմահարվեց ոչ միայն խորհրդարանական փոքրամասնության, այլև՝ արտախոր-

մանրամասները տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 32, թթ. 6-11, ֆ. 200, ց. 1, գ. 86, թթ. 40-41, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 4, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 116, 117, Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 295-298:

¹³ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 109:

¹⁴ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 109:

¹⁵ Նույն տեղում, էջ 110:

հրդարանական կուսակցությունների և Հանրապետության ոչ քաղաքական կազմակերպությունների շահերը: Ցավոք, օրախնդիր այդ հիմնահարցը այլ ծանր հետևանքներ ևս ունեցավ: ՀՀ-ի որդեգրած քաղաքականությունը վտանգավոր էր նաև այն առումով, որ ինչպես ՀՀ-ի խորհրդարանական խմբակցության, այնպես էլ վարչապետի և նախարարական կաբինետի քաղաքական ողջ գործունեությունը գործնականում մշակվում էր ոչ թե համապատասխան պետական կառույցներում, այլ նրանից դուրս՝ «ՀՀ-ի բարձրագույն մարմնի՝ բյուրոյի հովանավորությամբ»¹⁶: Դա ուներ իր պատճառները:

Առաջինն այն էր, որ ժողովրդավարությունը Հայաստանում կատարում էր իր առաջին քայլերը և, ինքնին հասկանալի է, որ այդ գործընթացում անխուսափելի էին բազմաթիվ անհարթությունները: Դրանից զատ հիշարժան է և այն, որ դեռևս բավականին ցածր էր երկրի, հետևաբար՝ խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների, ոչ քաղաքական կազմակերպությունների և հասարակական այլ կառույցների քաղաքական կուլտուրան: Եվ եթե հետևենք այն տրամաբանությանը, թե կառավարման և ոչ մի ձևի մեջ ղեկավարողներն ու ղեկավարվողներն այնքան փոխհամարժեք կերպով չեն ներկայանում, որքան պառլամենտարիզմի պայմաններում, որ խորհրդարանական հարաբերությունները հանդիսանում են երկրի ներքին կյանքի արտացոլումը և որ ամեն մի խորհրդարան կոչված է՝ լինելու ոչ միայն տվյալ երկրի հասարակական-քաղաքական կյանքի հայելին, այլև՝ նրա յուրատեսակ մտավոր մանրակերտն ու այլ հատկությունների յուրահատուկ ցուցափեղկը¹⁷, ապա կարող ենք պնդել, որ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին լիովին համապատասխան էր նաև պատշաճ քաղաքական մակարդակ չունեցող պառլամենտարիզմը:

Վավերագրերը հիմք են տալիս պնդել, որ քննարկվող հիմնահարցի շրջանակներում առավել ազդեցիկ դեր են կատարել սուբյեկտիվ գործոնները: Դրանցից ամենաազդեցիկը և, հետևանքների տեսանկյունից, ամենաբացասականը եղել է ՀՀ-ի բյուրոյի գործունեության հետևանքով խորհրդարանում և կառավարական ապարատում ձևավորված անբնական կախվածության հարաբերությունները: Կանխազգալով այդ վտանգը, դեռևս 1919 թ. օգոստոսին Հովհ. Քաջազունին սթափության կոչելով պնդում էր, որ ձևավորված պայմաններում ՀՀ-ի «... գործը զաղափարների պրոպագանդան չէ, սկզբունքների ցուցադրությունը չէ, այլ՝ երկրի շինարարությունը: Եթե մենք ընդդիմություն լինեինք, մեր խնդիրը միանգամայն այլ կլիներ: Բայց գտնվելով իշխանության ղեկին, մենք չենք կարող մեզ թույլ տալ անպատասխանատու կուսակցությունների շքեղությունը՝ վերացական սկզբունքների կուսական

¹⁶ Այդ մասին տես Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 294: Հովհ. Քաջազունի, Դ. Յ. Դաշնակցութիւնը անցիւղ չունի այլևս, էջ 24-25:

¹⁷ Տես Դր. Գ. Շաքարյան, Պառլամենտարիզմն իբրև մշակութաբանական երևույթ (հայկական հայեցակետ), Երևան, 1995, էջ 12:

մաքրությունը»¹⁸: Տավոք, պատմական իրադատությունների հետագա ընթացքը լիովին հավաստեց, որ ՀՅԴ-ն կողմնորոշվել էր դեպի արատավոր այդ գործելակերպը: Եվ միանգամայն բնական էր, որ հետադարձ հայացք նետելով Հայաստանի առաջին Հանրապետության երկրորդ խորհրդարանի գործունեությանը, Հովհ. Քաջազունին ուղղակի մատնացույց է անում իրավիճակի ձևավորման հիմնական պատճառ հանդիսացող ՀՅԴ բյուրոյի գործունեությունը: «Պետական հարցերը քննութեան էին առնուում ու լուծուում դռնփակ, - վկայում է Հովհ. Քաջազունին, - դաշնակցական ֆրակցիայի սենեակում, ու ապա յայտարարուում պարլամենտի ամբիոնից: Իրօք չկար եւ պարլամենտական ֆրակցիա, որովհետեւ սա դուած էր Դաշնակցութեան բիւրօի խիստ հսկողութեան տակ ու պարտաւոր էր կատարելու նրա հրամանները: Չկար եւ կառավարութիւն. սա եւս ենթարկած էր բիւրօին, բիւրօի մի տեսակ գործադիր մարմինն էր պետութեան մէջ: Բօլշեիկեան սիստեմ էր սա: Բայց այն, ինչ բօլշեիկները անում էին հետետողականորէն ու քացայայտ, մենք աշխատում էինք քողարկել դեմօկրատական ձեւերի տակ»¹⁹: Միակուսակցական գերիշխանության այդ ձգտումների բացասական հետևանքները երկար սպասեցնել չտվեցին, որի մասին շատ է գրվել պատմագիտության մեջ:

Հարկ է ընդգծել, որ արդի քաղաքագիտությունը հիմնավոր կերպով ապացուցում է, որ ցանկացած քաղաքական համակարգի կենսունակությունը և դիմադրողունակությունը դրսևորվում է հասարակության ուղղահայաց և հորիզոնական կապերը բնութագրող գործընթացների գործառնական ամբողջության ձևով: Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգը ևս դուրս չէր այդ ընդհանուր օրինաչափության ծիրից: Եվ երբ քաղաքական պահանջ էր առաջադրվում «մեր ճակատագիրը մեր սեփական ձեռքը վերցնենք, տեր դառնանք մեր երկրին՝ քանի որ ներկայիս բարդ միջազգային փոխհարաբերություններում դա հնարավոր է փոքրաթիվ ազգության համար, ապահովենք մեր գոյությունը իբրև քաղաքական ամբողջություն և մնացյալն արդեն կարող ենք հանգիստ թողնել ժամանակին»²⁰, ապա ավելի քան ակնհայտ էր, որ դրան կարելի էր հասնել միայն քաղաքական կյանքի գործառնական ամբողջության միջոցով: Ազգի քաղաքական ամբողջականությունը ապահովելու գերխնդիրը ենթադրում էր Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգի միավորիչ գործունեության ծավալում, հաշվի առնելով այդ գործընթացի վրա սահմանային այնպիսի էական ցուցիչների ազդեցությունը, ինչպիսիք էին «ներդրման միջոցները»՝ հասարակության աջակցությունը և պահանջարկը: Ցանկացած, այդ թվում և ազգային պետական համակարգի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ «ներդրման

¹⁸ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 109:

¹⁹ Հովհ. Քաջազունի, Գ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 30:

²⁰ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 110:

միջոցների» հաշվարկը չափազանց կարևոր էր մի քանի տեսանկյունից: Քաղաքագիտության տեսությունը գտնում է, որ միայն այդ ճանապարհով կարելի է նկարագրել, թե ներհասարակական և արտահասարակական պայմանները, այսինքն՝ շրջակա միջավայրն ինչպես է ազդում քաղաքական համակարգի վրա, կարևորվում է և այն, որ սահմանային վիճակում գտնվող «ներդրման միջոցները»՝ աջակցությունն ու պահանջարկը, քաղաքական համակարգը և ներհասարակական ու արտահասարակական պայմանները շաղկապում են միմյանց և, վերջապես, «ներդրման միջոցները» ձևով արտահայտում են այն ամենը, ինչը հասարակության քաղաքական համակարգի կենսունակության յուրահատուկ ցուցիչ համարվող ստրես է ծնում²¹: Այդ մեկնակետից միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանի քաղաքական իշխանության համակարգում ծավալվող մենատիրական ձգտումները չէին կարող համատեղվել «ներդրման միջոցների» բազմադեմությանը, այդ իսկ պատճառով էլ՝ երկրում հաստատված միակուսակցական կառավարումը բավականին ծանր հետևանքներ ունեցավ պետական շինարարության բոլոր ոլորտներում: Ոչնչով չհիմնավորված այդ քաղաքականության օրինաչափ արդյունքը պետք է համարել նաև Հանրապետության լեզվաբան խորհրդարանական համակարգի անվանական գործունեությունը, քանի որ այն միաժամանակ վկայում էր, որ ՀՀ-ի ֆունկցիոներները խորապես չէին ըմբռել այն իրողությունը, «... որ փոխադրելով մեր կուսակցական նիստերը պարլամենտական սրահն ու կառավարութեան շենքը, մեռցնում էինք կուսակցականօրեն»²²:

Այդ ամենը, ինչպես նաև 1920 թ. մայիսյան դեպքերը հանգեցրեցին այն րանին, որ Հայաստանում խորհրդարանական իշխանությունն անկում ապրեց և երկրում հաստատվեց ՀՀ-ի Բյուրո-Կառավարության բացարձակ դիկտատուրա: Թեև հետագա ամիսների քաղաքական իրադարձությունները նույնպես ծավալվում էին ի վնաս Հանրապետության՝ խորհրդարանը նույնքան ամսից հարկադրված էր ստեպ-ստեպ նիստեր գումարել: Ավելի քան ակնհայտ էր, որ Հանրապետության քաղաքական համակարգի կենսունակության և դիմադրողականության անկասելի անկման, ինչպես նաև արտաքին միջամտությունների՝ թուրք-հայկական պատերազմի հետևանքով Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական համակարգն իր որդեգրած ժողովրդավարական սկզբունքներով ընթանում էր դեպի մայրամուտ:

Սակայն պետք է ընդունել նաև, որ Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական քաղաքական համակարգը պետական շինարարության իր անավարտ պրակտիկայով հետք է թողել մեր բազմադարյան պատմության մեջ: Այդ առումով, կարծում ենք, ընդհանրության մեջ վերցրած

²¹ Սանրամասները տես David Easton. A Framework for Political Analysis. New-York, 1965, p. 113-114.

²² Դովի. Քաջազնունի, Գ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 30:

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական համակարգի արժևորման գործում բնութագրական պետք է համարել այն պնդումը, թե «... պառլամենտը և նրա որպիսին լինելը դիտվում է իբրև ազգի առողջ կամ հիվանդոտ կացության, ազգի մշակութային հասունության ամենահավաստի վկայագրերից մեկը...»²³։ Այս ընդհանրացված գնահատականը լիովին բնորոշում է քննարկվող հիմնահարցը։

Իրավիճակը նույնքան հակասական էր նաև խորհրդարանական ժողովրդավարությունը բնութագրող քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների գործունեության տեսանկյունից։ 72-ն (ՀՅԴ) ընդդեմ 4-ի (եսեռներ)՝ այսպիսին էր խորհրդարանական կուսակցությունների փաստական փոխհարաբերությունը։ Այդ մեկնակետից ավելորդ չէ մատնանշել, որ նշված կազմով խորհրդարանական համակարգը գործնականում ի գործու չէր ապահովել ժողովրդավարական համակարգերը բնորոշող այնպիսի հիմնարար հատկանիշներ, ինչպիսին էր ներկայացուցչությունը։ Երբ քաղաքագիտությունը պնդում է, թե կառավարման գործընթացում ժողովրդավարական իշխանության կարևորագույն հատկանիշներից մեկը քաղաքացիների մեծ զանգվածի մասնակցությունն է, դա պետք է ընկալել միայն ներկայացուցչության առումով։ Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ ժողովրդական զանգվածներն ինքնին պասիվ են և նրանց «... քաղաքական գործառնությունն ամենևին էլ նրանում չէ, որ ղեկավարեն ժողովրդավարությունը, նրանք հավանաբար երբեք պատրաստ չեն լինի այդ բանին»²⁴։

Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանական կուսակցությունների գործունեության ընթացքում չափազանց թույլ էր արտահայտվում նաև այնպիսի հիմնարար հատկանիշ, ինչպիսին քաղաքական սոցիալիզացիան էր։ Դա ևս ուներ իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։ Օբյեկտիվ պատճառները կապված էին երկրի քաղաքական համակարգի հետ և հանդիսանում էին նրա գործունեության օրինաչափ արդյունքը։ Ինչպես ցանկացած, այնպես էլ Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգն այս ոլորտում պարտ էր կյանքի կոչել փոխկապակցված երկու հիմնարար խնդիր։ Նախ, այն պետք է «աջակցության ռեզերվ» ստեղծելու միտումով հասարակության մեջ արմատավորեր պետության կենսունակության և քաղաքական համակարգի դիմադրողականության բարձրացմանը միտված արժեքներ (հայրենասիրություն, լոյալություն և այլն), ինչպես նաև՝ պետական գերակայությունների դիրքերից բավարարել հասարակության պահանջմունքները՝ մշտապես գիտակցելով, որ ոչ մի քաղաքական համակարգ երբեք չի կարող բավարարել իր բոլոր անդամների բոլոր շահերը։ Եվ երկրորդ, քաղա-

²³ Հր. Գ. Շաքարյան, Պառլամենտարիզմն իբրև մշակութաբանական երևույթ (հայկական հայեցակետ), էջ 12։

²⁴ Острогорский М. Я. Демократия и политическое партии // Политология: хрестоматия (сост. проф. М. А. Васильев, доц. М. С. Вершинин), М., 1999, с. 535.

քական համակարգը պարտավոր է մշտական և ճշգրիտ տեղեկատվություն ունենալ ինչպես հասարակության անդամների աջակցության աստիճանի, այնպես էլ շրջակա միջավայրի «ճնշումների» մասին, որպեսզի պետության գերակայությունների դիրքերից հնարավորություն ունենա դիմադարձ կանգնել և հաղթահարել ներքին և արտաքին ստրեսները²⁵։ Այդ հիմնարար օրինաչափությունների դիրքերից էլ արդի քաղաքագիտությունը գտնում է, որ «խորհրդարանական հարաբերությունները չեն կարող լինել այլ բան, քան խորհրդարանի դաիլիճից դուրս գոյություն ունեցող հարաբերությունների արտացոլում»²⁶։

Սուբյեկտիվ պատճառների շարքում իրենց տեսակարար կշռով հարկ է առանձնացնել ազդեցիկ երկու գործոն՝ ԴՅԴ մենիշխանական ձգտումները և դրա արդյունքում հրապարակ իջած օտարման միտումները։ Դա ամենևին էլ չպետք է հասկանալ այն իմաստով, թե ԴՅԴ գործունեությունը բոլորակերպ մպատակամղված էր վերոնշյալին։ Այս պարագայում պարզապես առնչվում ենք ԴՅԴ կողմից կուսակցական գաղափարները և սկզբունքները պետության և հասարակությանը պարտադրելու իրողությանը։ Դրա արդյունքում էլ Դայկական պետականությունն ամրապնդելու և քիչ թե շատ բարեկեցիկ կյանքով ապրող ժողովրդավարական հասարակարգ կառուցելու ԴՅԴ բոլոր ջանքերը ցանկալի արդյունքի չհամգեցրեցին։ Այդ իսկ պատճառով էլ քաղաքագիտությունը թելադրում է, որ հասարակության «աջակցության ռեզերվ» կարելի է ապահովել միայն այն դեպքում, երբ առաջնություն է տրվում համապետական նշանակության գաղափարներին։ Հակառակ պարագային, կուսակցական ցանկացած գաղափարախոսություն ներդնելու ամեն փորձ անխուսափելիորեն օտարում է «ոչ կուսակցական զանգվածներին», անտեսում կամ ոտնահարում է նրանց շահերը։ Կարծում ենք տեղին է հիշեցնել մեկ այլ օրինաչափություն ևս, այն է՝ «կուսակցությունը միայն նպատակին հասնելու միջոց է (ընդգծումը մերն է՝ Ա.Բ.)։ Եթե կուսակցությունն իր սեփական, առանձնահատուկ նպատակներով և շահերով դառնում է ինքնանպատակ, ապա այն նպատակամղված կերպով անջատվում է իր ներկայացրած դասակարգից»²⁷։ Այդ տեսանկյունից խիստ բնորոշ էր հատկապես 1920 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Դայաստանում ձևավորված բարոյա-հոգեբանական ծանր կացությունը։

Այդ մեկնակետից էլ պետք է քննել խորհրդարանական կուսակցությունների ժողովրդավարության հիմնական բնութագրիչներից հաջորդը՝ խորհրդարանական ընդդիմության հարցը։

Հարկ է ընդունել, որ Դայաստանի առաջին Դանրապետության երկրորդ խորհրդարանի ընդդիմության մասին գործնականում դրական շատ քիչ բան

²⁵ Սանրամասները տե՛ս David Easton. A Framework for Political Analysis, p. 125, 128.

²⁶ Осиоровский М. Я. Демократия и политические партии, с. 535.

²⁷ Осиоровский М. Я. Демократия и политические партии, с. 545.

կարելի է ասել: Ճիշտ կլինի ասել, որ ժամանակաշրջանի խորհրդարանական քաղաքական համակարգում ընդդիմությունը ոչ մի տեսակարար կշիռ չուներ: Տեղին է հիշատակել, որ լեգիտիմ խորհրդարանական համակարգի գործառնության շեմին ժողովրդավարությանն անհարիր այդ իրավիճակի հնարավոր ծանր հետևանքները կանխազգալով՝ Յուլի. Քաջագունին ԴՅԴ ղեկավարների ուշադրությունը հրավիրում է այն իրողության վրա, որ «իբրև կառավարող, այսինքն՝ իշխանության ղեկի մոտ կանգնած և երկրի ճակատագիրը ղեկավարող կուսակցություն, մենք չենք կարող մեր գործողությունները համապատասխանեցնել բացառապես մեր դավանած սկզբունքների հետ, այլ պարտավոր ենք համաձայնեցնել նաև մեր կեցության իրական պայմանների, երկրի իրական պահանջների հետ, մենք պարտավոր ենք իշխանական այսօրվա պահանջները տարբերել հատ թե քիչ հեռավոր հնարավորություններից»²⁸: Ցավոք, այդ հարցում ևս ԴՅԴ-ն անսասան կերպով կանգնեց որդեգրված դիրքերում, ինչի արդյունքում, խորհրդարանական փոքրամասնության նկատմամբ քամահրական վերաբերմունք դրսևորվելով, հիմնովին տապալեց շատ թե քիչ կառուցողական ընդդիմության ձևավորումը: Այդ իսկ պատճառով էլ հետադարձ անդրադարձ կատարելով այդ անհեռատես քաղաքականության հետևանքներին, Յուլի. Քաջագունին գրում է, թե «Զեկնք հասկանում, որ մեր սեփական դաստիարակութեան համար մեծ կարիք ունեինք, որ մի զօրեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, ի կարգ հրաւիրեր եւ թոյլ չտար, որ դուրս գայինք օրենքի ու իրաւասութեան սահմաններից»²⁹:

Միակ բացառությունը 1920 թ. նոյեմբերի վերջերին ձևավորված ԴՅԴ - սոցիալիստ հեղափոխական կառավարական կռալիցիան էր, որի ձևավորումը և Դանրապետության ներքին և արտաքին կյանքի կայունացման գործում կարճատև՝ բայց նպատակադիր գործունեությունն այլևս չէր կարող շատ թե քիչ ազդեցիկ նշանակություն ունենալ: Այս պարագայում ուշադրության է արժանի առանցքային նշանակություն ունեցող մի այլ փաստ ևս: «Ի պատիվ հայ սոցիալիստ-հեղափոխականների, - կառավարական կռալիցիայի մասին գրում է Դայաստանի վերջին վարչապես Ս. Վրացյանը, - Դայաստանի ամենատագնապալի վայրկյանին, նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին և, հակառակ ակներև դժվարություններին, մտան կառավարության մեջ»³⁰: Դա բավականին ծանրակշիռ փաստարկ է ըննդմ խնդրո առարկա հարցում ԴՅԴ անհետևողական քաղաքականության: Ուշացած այդ խոստովանությունը վկայում է նաև, որ ժամանակն

²⁸ «Բանքեր Դայաստանի արխիվների», 1991, N 3, էջ 109:

²⁹ Յուլի. Քաջագունի, Գ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 30:

³⁰ Ս. Վրացյան, Դայաստանի Դանրապետություն, էջ 521:

ինքը ՅՅԴ առաջնորդներին թելադրեց վերանայել ընդդիմության նկատմամբ կուսակցության քաղաքականությունը և բռնել փոխգիշման ճանապարհը:

Հայաստանի խորհրդարանում վերը նշված արատավոր բոլոր երևույթների համատեքստում ամենևին էլ պատահական չպետք է համարել Դովի. Քաջազնունու այն պնդումը, թե «Պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ծեւ էր առանց պարունակութեան»³¹: Դա պետք է հասկանալ իբրև բացահայտ ժխտողական մոտեցում: Կարծում ենք, Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետի և խորհրդարանի վերջին նախագահի³² այդ պնդումը նկատի ունի երկրորդ խորհրդարանի աշխատանքներում միակուսակցական կառավարում հաստատելու նկրտումները և ընդդիմության վերաբերյալ ժողովրդավարության ընդունված չափանիշների ոտնահարումը: Այն փաստը, որ իրական ընդդիմությունը ոչ միայն չափազանց թույլ էր, այլև՝ համիրավի անտեսվում էր ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության և պետական այրերի կողմից, բացասական մեծ հետք է թողել Հանրապետության քաղաքական համակարգի գործունեության վրա:

Հայաստանի առաջին Հանրապետության լեգիտիմ խորհրդարանի գործունեության ողջ ընթացքում և՛ օրենսդիր և՛ գործադիր իշխանության ողջ քաղաքականությունը անվերապահորեն որոշվել է ՅՅԴ կուսակցության, ավելի ճիշտ՝ ՅՅԴ խիստ միաձույլ բյուրոյի կողմից: Դա մեկ անգամ ևս փաստում է, որ ոչ միայն Հանրապետության քաղաքական կյանքում, այլև՝ ՅՅԴ շրջանակներում հաստատվել էր կուսակցական խիստ կենտրոնացված իշխանություն, իսկ ընդդիմություն կազմող ծախ-դաշնակցականները այդ միաձույլ կառույցից ներս որևէ տեսակարար կշիռ չէին կարող ունենալ:

Ի մի բերելով այդ ամենը, կարող ենք հանգել մի շարք ընդհանուր օրինաչափությունների: Թեև Հայաստանի առաջին Հանրապետության ժողովրդավարական եության կարևորագույն վկայություններից առաջինը կառավարման խորհրդարանական համակարգն էր, կասկածից վեր է և այն, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ խորհրդարանական ժողովրդավարության սաղմերը երկրում բնականոն զարգացում չունեցան: Չնայած այն բանին, որ խորհրդարանական համակարգի ժողովրդավարական բնութագրիչներից է նաև խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև՝ հասարակական և ազգային կազմակերպությունների անարգել գործունեությունը, պետք է արձանագրել նաև, որ այդ միտումները ժողովրդավարությանը բնորոշ օրինաչափ զարգացում չունեցան, որի արդյունքում էլ խորհրդարանում գործնականում հաստատվեց միակուսակցական կառավարում:

³¹ Դովի, Քաջազնունի, Դ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, էջ 30:

³² Ըստ «Դառաջ» թերթի, 1920 թ. նոյեմբերի 4-ի միստում Հայաստանի խորհրդարանի վերջին նախագահ ընտրվեց արտասահմանյան երկարատև գործուղումից հայրենիք վերադարձած Դովի. Քաջազնունին: Տե՛ս «Դառաջ», 6 նոյեմբերի 1920 թ: